

Ministry of Diaspora of Armenia


From: RA Ministry of Diaspora [info@mindiaspora.am]
Sent: 10 октября 2011 г. 10:25
To: 'Ministry of Diaspora of Armenia'
Subject: FW: ՇՆՈՐՀԱԿԱԱԳԻՐ

-----Original Message-----

From: Hampig Mardirossian [mailto:hampigmardirossian@hotmail.com]
Sent: Sunday, October 09, 2011 3:53 AM
To: hranoush
Subject: ՇՆՈՐՀԱԿԱԱԳԻՐ

Ազնուափայլ
Տիկին Հրանուշ Յակոբյան,
Սփիւոթի Նախարար Հայաստանի Հանրապետութեան

ԵՐԵՒԱՆ



Յարգարժան Տիկին Նախարար,

Արդէն, վերջ գտած է Ձեր ու Ձեր Նախարարութեան անձնակազմի կողմ.

կազմակերպուած ծանօթ «Համահայկական համաժողով»-ը:

Թերևս, համագումարի բնթացքին չկարողանայի ճիշդ գնահատական տալ կատարուած աշխատանքին մասին ու առ այդ արժեւորելի կատարուածը:

Սակայն, հազիւ վերադարձած Պէյրութ, երբ վերաբաղ կ'ընեմ անցած խճողուած բոցերայի օրերը, նամանաւանդ՝ երկու օրերու վրայ 560 Սփիւոթահայ

ներկայացուցիչներու մասնակցութեամբ տեղի ունեցած բացառիկ հանդիպումները, նոր նոր կը զգամ, թէ ինչ վիթխարի աշխատանք էր, ինչ

մեծ պատասխանատուութիւն էր համախմբել այդքան մեծ թիւով Սփիւոթահայ ղեկավարներ ու պատասխանատուներ, մամուլի ու

տեղեկատուական միջոցներու ներկայացուցիչներ և ունենալ հեզասահ ժողովներ, քննարկելու համար Հայաստանի, Արցախի ու

Սփիւոթի առջև ծառայած այսօրուայ մարտահրաւերները:

Յարգելի Տիկին Նախագահ,

Իմ յիշողութեան միջ կզակի պիտի մնայ մասնաւորաբար Հայաստանի անկախութեան կապակցութեամբ տեղի ունեցած բացառիկ ու

հպարտացնող զինուորական շքերթը, գոր տեսնելու ու վայելելու պատիւն ու ուրախութիւնը ունեցայ: Ինձի, Արևմտահայաստան ծնած, հող ու

ծննդավայր կորսնցուցած հայ մարդու համար, տեսածս մեծ էր իմ երագէն աւելի... որուն համար միայն կրնամ շնորհակալ ըլլալ Ձեզի:

Արդարև, ազնիւ Տիկին Նախարար, իրապէս ու մեծապէս գնահատելով Ձեր կատարած այդ հսկայ աշխատանքը, որուն տպաւորութիւնը,

արդիւնքը և մասնաւորաբար ձգած կարեւորութիւնը կը զգանք աւելի ուշ... ու անուշցած, այսու կրկին անգամ կուզամ յայտնել իմ երախտագիտութիւնը

ինձի տրուած պատեհութեան համար, որ իմ մտապատկերի միջ պիտ մնայ երկար ու անջնջելի: Նոյն առթիւ, կը շնորհաւորեմ Ձեր խիզախ կեցուածքը,

նման խոշոր պատասխանատուութիւններ գործնականացնելուդ համար, որ կը սատարէ Հայրենիք, Արցախ և Հայաստան գործակցութեան ու միասնական

աշխատանքին:

Ուստի, արտայայտել ևս իմ անկեղծ զգացումները և ստացած տպաւորութիւնները Համաժողով. ու իրագործուած իրարարանչիւր միջոցադրում.

Ձեզի՝ անձնապես և Ձեր ժրագան ու գործունեայ անձնակազմին կր մաղթեմ քաջատողջութիւն,  
անսահման կամք ու կորով, և Ձեր ազգանուէր  
ու հայրենանուէր գործերուն լիակատար յաջողութիւններ:  
Յարգանքներով՝

Համրիկ Մարտիրոսեան

Գլխաւոր Խմրագիր՝

Հ.Բ.Ը.Միութեան «Խոսնակ» Պաշտօնաթերթի